

ՀԱՅԱՍՏԱՆ

Լ Ի Ը Գ Ի Ր

ՔԱՂԱՅԻՆ, ԱՊՐԵՅԻՆ, ԲԱՆԱՊԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՏՐԱԿԱՆ

Տարեկան գին կանխիկ դրուուչ 100 : Վեցամսեայ գին դրուուչ 52 1/2 : Եռամսեայ գին 26 3/4 :
Հինգ տարապարտոց գանձոցին մէկ օրինակ իրեն ձրի պիտի տրուի :
Այս Լրագիրքը ամեն շաբաթ օրերը կը հրատարակուի :

Պօղոսէն գուրու գացած Լրագիրքուն փոխալին ծովորդ տոնոցին վրայ է :
Իր շալին համար չուր մը հրատարակեց ու զոցը դիտի ջնարկ տոցին 40 փարպ :
Նորասօղ գրոց ծանուցու մը ձրի է : Դուրսէն եկած նամակներուն փոխալին ծովորդ իրեցը դիտի ջնարկ :

ՔԱՂԱՅԻՆ

Ն Ե Ր Ք Ի Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ՊՕԼԻՍ 14 ՓԵՏՐՎԱՐ

Բարձրագոյն Մուստաֆա փաշային խոհեմ կառավարութիւնը շատ հանգարտութեան մէջ կը պահէ ստորեւ երկրին բնակիչները . մանաւանդ Տիւրքի տաղիւն անհանգարտ և խռովակեր մարդիկը . որ այլ և այլ ցեղերէ բաղկացած ըլլալով անպակաս իրարու հետ թշնամութիւն կ'ընեն . ինչ պէս որ ամէն անկիրթ ազգաց յատկութիւն է : Բնիկ քանի մը ամիս առաջ Շամ Թարապուսի կողմերը բնակող Ռեզան և Շէմսին բաւած ցեղերուն մեծերը իրարու հետ ինկան . կուր ալ սիրտեր էր մեղքերնին , երբ որ Մուստաֆա փաշային խմանալով իրեն գանձապետը (խաղիատարը) Ռեշիտ Էֆէն տին խրկեց , որ երկու կողմին ալ պէտք եղած խնամանքը տայ և խաղաղութեան յորդորէ , և խռովութեան պատճառ և դրդուիչ եղող գլխաւորները հետը առնէ Պերութ բերէ , որ դատաւարաց առաջը քննուի յանդիմանին , և արժանաւոր պատիժնին տրուի : Այս մարդիկի գանձեցան . բայց կուսաւ կալին հրամանին դէմ կեցան , չուզեցին Պերութ երթալ : Օրաց իմաց արուեւրան պէս խռովարարները բանը գէշ երթալը հասկնալով վախոյան և հնազանդեւր ստիպուեցան . և այս դարձ որ առաջը ըլլար նէ քանի մը հարիւր հազի մեռներու պատճառ կրնար ըլլալ , այս անգամ առանց մեկուն քիթը արուեւրան ըմբոյս : Ռեշիտ Էֆէնտին յիշեալ երկու ցեղին գլխաւորները հետը Պերութ բերաւ . քանի մըն ալ սուրի յանցանքներ , որ անցած տարուին էր որ Մուստաֆա փաշային մը գիւղերը տնդերները զարկին կողպտեցին նէ տանը ալ հետեւին են եղեր . և բոստ փնտնելուն հաւտուցման համար որ 800.000 զուռուշ տուգանք կարուեցաւ նէ , որ պիտի առնուէր և այն գեղերուն բնակիչներուն պիտի բաժնուէր , ասանք տալ չեն ուզեր եղեր : Հիմա ասանք ամեն ալ կառավարութեան ձեռքը անցած են . և դատաստանին տեսնուելու և քննութիւննին ըլլալու վրայ է կառավարութեան ժողովքին մէջ Մուստաֆա փաշային նախագահութեամբը :

Մուստաֆային երկու գլխաւորները , Հաւմիտ Էլպէյ , և Հասան Էլ Սալման Էֆէնտին , որ այս օրերս Պերութ գտնուելով շատ սիրով և բարեկամութեամբ ընդունելութիւն գտան փաշային , երբ որ տեղերնին դարձան նէ իրենց կողմէն ալ աւոր մէկ երախտագիտութեան նշան մը ցրցնելու համար Հաւմիտ Էլպէյը 15.000 զուռուշ , և Հասան Էլ Սալմանը 10.000 զուռուշ ընծայ խրկեցին : Յայտնի բան մըն էր որ փաշային այս ընծայ իրեն մասնաւոր գանձարանին մէջ չէր ընդուներ . և որ ըստհետեւ գիտէր որ ասանք երկուքն ալ կառավարութեան գանձուն պարտք ունին , այս անգամ աւանդ կողմէն իրեն հասած 25.000 զուռուշ անանց ունեցած պարտքին հաշուին սեպեց . և Գեֆէրաբէյ յանձնելով անոր ստորագրութեամբը և կնքովը պէտք եղած հատուցման թուղթը առաւ անանց խրկեց : Այս դարձ իմացուելով Մուստաֆա փաշային յարգը այն երկրները շատ եփեցուց . ամենքն ալ եւս առաւել սիրել սկստան անիկայ :

— Ի դարձայն նախընթաց թուերուն մէջ ծանուցեր ենք մեր ընթերցողացը որ տեղութեան բարձրագոյն հրամանաւ մասնաւոր նշաններ պիտի չենուին և Բիւրոստանի ապստամբները զսպող հզօր բանակին մէջ իրենց յաղթութիւններովը արժանի եղող զօրապետներուն ու զօրքերուն պիտի տրուի : Այս նշան չէր խախտուիր , և մէկ կողմը մեծազոր Ինքնակալին թաւառան կայ , և միւս կողմը Բիւրոստանի լեռներուն նկարագրութիւնը զօրապետին :

ներուն որոշումները անգամանակներով զարդարուած են : Այնպէս հինգ շաբաթի որ մէկը—ալի շաբաթ հանդէսը կատարեցաւ , այս նշանը կախեր էին մեծազոր Ինքնակալը , բարձրագոյն փոխարքային և վսեմափայլ սպարապետ Սայիտ փաշան : Ահա զօր Ինքնակալը այն առաւօտուն ինք իր ձեռքը կախեր էր իւր այս երկու սիրելի նախարարներուն կողքը : Այս շաբաթ հանդէսին ներկայ գտնուող մարդը չէր կրնար զննել զայլ ու չի տրամիլ . որովհետեւ Բիւրոստանի բանակին սպարապետ հանգուցեալ Օսման փաշային տեղը դատարկ էր : Այս նախարարը պատերազմին աստիպել վստահներէն և մահէն անգամ ազատուէն ետք , հաղիւ Պօլս եկաւ որ իւր բոստ յաղթութիւններուն փոխարէնը առնէ , մահէն ալ իւր ետեւէն հասաւ ու խորին տրտմութեան մէջ ձգեց անիկա ծանցողներուն սիրտը :

— Բաւարիայի ձայնը քանի մը ժամանակէ ՚ի վեր գլուխ թելէ բարձրովին կտրեր էր . բայց օգին խոնաւութենէն վերտոյն երեւան ելաւ . և կ'ըսեն թէ գլուխաւորապէս Սամաթիա օրը քանի մը հազի կը բռնուի :

— Օրապետին վսեմափայլ Միւստաֆա փաշան որ զի նուորական դպրոցին ալ երկրորդ հրամանատար էր , հիմա այն դպրոցին կառավարիչ եղաւ , ու ընդհանուր տեղակալ անուանեցաւ :

— Օրապետին վսեմափայլ Տերփիլ փաշան որ զի նուորական դպրոցին գաւառու և հատարակց կըրթութեանը ժողովին անգամ էր , վսեմափայլ Միւստաֆա փաշային տեղը երկրորդ հրամանատար կարգեցաւ :

— Օրապետին նախակրթական դպրոցին կառուարիչ զօրապետին վսեմափայլ Բարախիմ փաշան , պատերազմի գերագոյն ժողովին անգամ ու ընդհանուր տեղակալ անուանեցաւ :

— Հաղարապետ թէ ֆիլիպպի Կարահիմ փաշային յաղթեց : Բարձրագոյն փոխարքային թղթակցութեան գիւտնին անգամ Օսման պէյը ու Պեֆէլի Էֆէնտին , և ներքին գործոց գիւտնին անգամ Միւստաֆա փաշային ու Շէրիֆ Էֆէնտին երրորդ աստիճանի պաշտօնատար անուանեցան :

— Բարձրագոյն փոխարքային թղթակցութեան գիւտնին անգամ Սայիտ պէյը Մուստաֆա փաշային և Մուստաֆա պէյը , և արտաքին գործոց գիւտնին անգամ Շէրիֆ Էֆէնտին Բալթի Էֆէնտին երրորդ աստիճանի պաշտօնատար անուանեցան :

— Թղթակցութեան գիւտնին անգամ Իսմէթ պէյը և արտաքին գործոց գիւտնին անգամ Իսմէթ Էֆէնտին հինգերորդ կարգի նշանը ընդունեցին :

— Սեֆիլի նահանգին նախկին մալիքի—ալի արքայ Թահիր Էֆէնտին , Կայսաթի պաշտօնով Հոմի կառավարիչ կարգեցաւ :

— Բասն և հինգ օր շարունակ անձրեւ գալով իշխուած մէջ և չընկալները շատ ծանր փնտնել պատճառեցին : Մէնեմէնի գաշտը գտնուած ութը հարիւր գլուխի չափ անասուն այն տեղի գետը առատանալով խեղդեց և քչեց տարաւ : Այս կաթ և ձիւնի բեռնաւորած ուղտեր Մալիսիայու ծամբուն վրայ կորուեցան , Մալիսիայու փայտաւ չէն կամուրջը չի մնաց : Չէմէ , լեռնէն ինքնա հեղեղները հետեւին խոշոր ապաւում քարեր և հողեր գլորելով բերելով քաղաքը կոխեցին և մեծ վնասներ հասցուցին քաղաքին ցած կողմը մաղաղակերպ մէջ դրուած սպարներուն : Իշխուած քաղաքին մէջ քարաշէն նոր տուններուն վրայի ծածկերը փրան վար թափեցան , ջուրը քաղաքին փողոցներուն մէջ բաժնուելով փողոցներուն երթեւեկութիւնը խափանեց . և կը վախճուի , չըլլայ որ ջուրերը ցած տեղերը մնալով և վաղելու ծամբայ չի գտնելով հոտի և օդը ապականէ , և ամառը ջերմ և ուրիշ հիւանդութիւններ պատճառէ : Օրովն հեռու երկրներ ըլլալու երթեւեկութիւնները ծամբաներուն աւերակներուն համար գոցուելով հատարակութեան ապրուստի վերաբերեալ հարկաւոր բաները

հատան , չեն գտնուիր . և գտնուածներն ալ սովորական գնոյն կրկնապատիկն են :

Օգոստոսի գէշութիւնները չափեւեւուն կանաւաւոր երթեւեկութեանն ալ փնտ տուաւ աս ջիւ շաբաթուն : Պերութ ծանաղարհնորդութիւն ընող Մուստաֆային չափեւեւը իր սովորական օրէն 8 օր ետ մնաց . թրիտեղի չափեւեւը երեքշաբթի գալուտեղը հինգշաբթի եկաւ . որ Չէմէի առաջ կայներ էր . և հարկաւոր գիրքըր ցամաքի ծամբով իշխու խրկեր էր : Արտաքին գործի երթալու չափեւեւն ալ երեք օր ուշացաւ : Միայն Պատմագի Բաթայի չափեւեւը և Ռօսիան ընկերութեան բեռ կրող երկաթ շափեւեւը իրենց սովորական ժամանակը չուշացուցին :

Միւստաֆային տուտութեանն և զոստ փնտնելուն ամենէն մեծը , որովհետեւ շատ խեղճ և ազգաւոր մարդոց գալու , այն էր որ պատահեցաւ ժանտախտի հիւանդանոցին , որ 1 տոյն Բարուչին կրծաւորներուն կառավարութեան տակն էր , և կրակին առնէն ՚ի վեր շատ աղքատ մարդիկ իրենց ընտանեօրը հան կը բնակէին : Միւստաֆային այս ջիւտածքս այն աստիճան գէշուցին , որ մէջի բընակողները վախնալ սկսան , չըլլայ թէ վրանին փրկէ : Այս համար հարկ եղաւ անկեց դուրս ելլել : Կըսուի որ Բարուչին կրծաւորները այս տեղը պիտի նարդեն . և առաջինն աւելի ընդարձակ պիտի շինեն . ասանկ բան մը ընելու ըլլան նէ շատ աղէկ կ'ըլլայ . որովհետեւ տրտմութեան կարգաւ շատ մը աղքատներու մեծ բարեբարութիւն բոստ կ'ըլլան :

— Երապիտանի բանակին երկրորդ հրամանատար վսեմափայլ Ռեշիտ փաշան որ Մուստաֆային բանակին ընդհանուր սպարապետ անուանեցաւ , և չորեքշաբթի օրը Վեհափաւ Երապիտանի ներկայաւ ցաւ տարը համբուրելու և իւր նոր բարձրագոյն պաշտօնին պատուոց նշանը ընդունելու :

— Յունիս 7 ին (գէտեմբեր 26) Շամ քաղաքը մէկ խռովութիւն մը եղաւ ոչինչ պատճառով մը , բայց չուտով հանգարտեցաւ : Արաւոսկին սպարապետ ժողովեցան քաղաքին երեւելիները խորհուրդի համար : Տաճիկները կարծեցին որ խորհուրդին նպատակը վնասուր գրելու համար էր ընտաւարը ընտրելու վրայօք պիտի ըլլայ . այս կարծիքս մէկին գլուխ եղաւ ալ նէ ուրիշներուն մարքին վրայ իրրեւ ճշմարիտ աղբերով խանութները դուրս գոցուի եղան . մէկ քանի քուլէին մէջ չուկայն անապատ գարձաւ : Այս տուգիւ խմայան որ խորհուրդը անանկ բանի համար չէ եղեր , որտեղին ալ պահովելով նորէն ամէն մարդ իր բանին դարձան :

Այս խորհուրդը ճշմարիտէն փոխելով հան պատարարող արապներուն տեղ ցրցնելու համար է եղեր : Ոմանք ըսեր են որ յիշեալ արապները չուկեն ալ նէ պէտք է անանք բռնադատել որ Պօլս քաղաքը երթան բնակին . որպէս զի Հաւրան դաւաւր վրանաբնակ գող արապային բէն պաշտպանեն : Աւրիշները ըսեր են որ աւելի աղէկ է ասանք վնասուր ընել կարգաւորելով զինուորներէն դուրս (պաշտ պօզուք) : Բայց շատը կը խորհէին որ Պատու պէկ խրկուին . մէկ մը որ այս քաղաքը Տիւրքի տալի մօտ է . մէկ մըն ալ որ Հոմի և Համուս քաղաքներուն ալ մօտ ըլլալով այս քաղաքները այն կողմերը գտնուող արապներէն պաշտպանելու դիւրին կ'ըլլայ :

— Երապիտանի ծանկթի Բերքիբէյին անցի ալ կիրակի Ղալաթիայի սուրբ Պետրոսի եկեղեցին հանդիսաւոր պատարագ ըրաւ : Այս եկեղեցին գոմար մէկ քովը ՚ի պատու Սրբազան Պապին Պիոս իններորդին յաղթական կամար մը կանգնած էր զանազան դրօշակներով զարդարուած , մէջ տեղը իւր կենդանագիրը և բարձրագոյն կերպ կրկ խորհուրդաւոր ստորագրութիւններ :

յաջորդ օրը յունվար 28 : Կերեւէր որ այս օրս որոշուած էր երկու կողմէն, բանը լրացնող կռիւր և պատերազմը ընելու համար : Թագաւորը երկու կողմին այս կերպով խորուն հակառակութենէն և ընդունաւ պատերազմէն ծագելու հետեւութիւններուն վրայ աղէկ մը մտածելով հասկըցաւ որ իր յամառութեանը և ժողովրդեան միաբան կամայը դէմ կենդանի վերջը ուր պիտի հասնի . սիրտը վախ մտաւ . նոյն հետոյն նախարարները ամէն ալ նախարարութենէն հանեց . Պ. Քառեգդօն ալ, որ առաջին նախարարն էր, աքսոր խրկեց Վաթուքէն դուռն : Քառեգդօն զօրաց հրամանատարը այս բաները հասարակութեան իմացուց . անոնք ալ կըռվիլը յաջորդ օրուան ձգեցին, բնութեամբ որ՝ այն միջոցին խել մը քաղաքիւստի սպառնալիքներ ալ ունէր Վաթուքէն վրայ կը քաղէն եղեր . Թագաւորը ալ սիրայ լսելովն է եղեր որ վախցեր է, և առաջնորդ նախարարները պաշտօնէ հաներ, եւ անոնց տեղը նախարար ընելու համար ազատութիւն և սահմանաւոր կառավարութիւն ուղղող մարդիկ գտեր է : Այս խօսքը ետքէն սուտ ելաւ . ստուգեցաւ որ քաղաքիւստի սպառնալիքն ոչ գալու կայ եղեր և ոչ եկած : Սիւնիկացիներուն օրինակը և յորդորը արթնցուց նախարարները, որ իրենք ալ ազատութիւն և սահմանաւոր կառավարութիւն ուղեն . ինչպէս որ անոնք քիչ ժամանակ առաջ ուղած էին, և կամքերն ալ քաղցուցեր էին :

Յունվար 29 ին առաւելաց, երբ որ հասարակութիւնը կրակի պէս բորբոքեր էր, և Թագաւորին վրայ պիտի թափէին, Թագաւորը այս յայտարարութիւնով հանեց, և քաղաքին պատերազմը վրայ փակցրնել տուաւ :

« Գերտինանոս ք, շնորհիւն աստուծոյ Թագաւոր երկուց Սիւնիկայից, Կրուսողէմի, և այլն . դուքս Բառմայի և Բիւրջնայի, և ժառանգ մեծ իշխան Թօթրանայի :

« Սեր սիրելի հայատակներուն իղծը և վախճող իմանալով, որ հիմակուան քաղաքականութեան համեմատելու երաշխաւորութիւն և սահմանադրութիւններ ձեռք ձգել կ'ուզեն, կը ծանուցանեմ որ այս բանիս վրայ մեզի յայտնած փոխադրներուն ղեկանիլ կ'ուզեմք . անոնց մէկ կառավարութեան սահմանադրութիւն մը տալով . և այս բանս յանձնած եմք մեր կառավարութեան նոր նախարարին, որ մինչեւ տասն օր մեզի այս բանիս վրայ մէկ օրէնք մը ներկայացնեն . որ մենք ալ մեր հաճութիւնն տանք : Երկու օրէնքներուն հիմը ասանք պիտի ըլլան :

« Օրէնսդրական կարողութիւնը ի գործ պիտի դնեմք մենք, և երկու խորհրդարան . մէկը քաղաքական և մէկը քաղաքական : Վաթուքէն խորհրդարանին անդամները մենք պիտի ընտրեմք . երկրորդին անդամները ընտրողներուն քուէով պիտի ըլլայ . և որքան տուք տուողները ընտրողներուն կարգը անցնելու ըլլալին ալ ետքը պիտի որոշուի :

« Թագաւորութեան երկիրներուն մէջ տիրող կրօնքը պիտի ըլլայ միայն հռոմէականը . և ուրիշ կրօնքի թոյլտուութիւն պիտի չըլլայ :

« Թագաւորին անձը պիտի համարուի նուիրական և անբռնաբարելի . և մէկ բանի մըն ալ պատասխան կամ հաշիւ տալու պիտի չի պարտաւորի :

« Կառավարութեան ամէն գործերուն հաշիւը նախարարները միայն պիտի պարտաւորին տալու :

« Օրովայն և ցամաքային զօրքերը Թագաւորին հրամանին տակ պիտի ըլլան :

« Վրդային պահպան զօրքը Թագաւորանիտ մայրաքաղաքին մէջ ինչ կերպով կարգի դրուած է նէ՝ բոլոր Թագաւորութեան երկիրներուն մէջ ալ նոյն կերպով պիտի կարգի դրուի :

« Տպագրութիւնը ազատ պիտի ըլլայ, բայց առանկ օրէնքի մը տակ, որ պիտի չի թողու հաւատարմի և կրօնի և բարուց և հասարակաց բարեկարգութեան և Թագաւորին և Թագաւորական տանը և դրոյ տէրութեանց մեծերու և անոնց տանը դէմ, և ոչ ալ մասնաւոր մարդոց պատուոյն դէմ բան հրատարակելու :

« Հատարակութեան կը ծանուցանեմք մեր իշխանական ազատ որոշումը . և բարեկարգութիւնը պահելու համար մեր ժողովրդեան հաւատարմութեանը և որոնք շխալութեանը կը վտահանք . որ օրէնքներուն և օրինաւոր իշխանութիւններուն արժանի եղած յարգը տրուի » :

Եւթի. 29 Յունվար 1848 :

Փետրանիս Բ.
Նախարար խորհրդական Դայիր պէ-պառլեան, նախագահ խորհրդական Կաթիկ նախարար .
Դաւիթ Սեդուս — Բաբիբօլայի :

Այս Սեդուս — Բաբիբօլայի դուքսը, որ Պ. Քառեգդօնի տեղը նախարարաց խորհրդական

ատենին նախագահ դրուեցաւ, առաջ Վաթուքէն տէրութեան կողմէն Փարիզ դեսպան գացած՝ և ժամանակ մը հոն կեցած ըլլալով, սահմանաւոր կառավարութեան ճամբան ստիպու է . ուստի նախարարներուն ուղած ազատութիւնին ճամբով անցնելու համար :

Վաթուքէն այս անցքերը երբ որ Հռոմ իմացուեցան, ծերակոյտը հրաման հանեց որ հասարակաց ուրախութիւն ըլլայ . և ամէնուն ալ յիշեցուց որ իգաւրայի մէջ այս ազատութեան ոգին արթնցընողը Պիոս Թ. Հռոմայ քահանայապետն է :

Վաթուքէն աքսորուած նախարարը Պ. Քառեգդօն ձեռքով շոգենաւով Իիօնիօ գնաց . բայց քաղաքին կառավարիչը թող չի տուաւ որ ցամաքը ելլէ : Հարկ եղաւ շոգենաւուն որ բացուի . և գլուխը դարձուց դէպ ի ճէնօվա . Պ. Քառեգդօն հոն ելաւ, և անմիջապէս ճամբայ ելաւ Սօմէնա երթալու :

Այս շաբթու նիւթերին շատ ընդուն համար՝ իգաւրայի ուրիշ անցքերուն պատմութիւնը եկող շաբթուան կը ձգեմք :

ԱՅԳԱՅԻՆ

Արշալոյս Արարտեան լրագիրը կը ծանուցանէ որ Վերադարձու Լեւեան Գրիգոր աղային կը տակաւանարն է բարձրագոյն Եպիսկոպոս Երբ համ աղայն, և կտակաւ իր ժողովուրդը և Սանիտայի գործատանց և հիւանդանոցաց համար ձգած 700,000 լուռուշը Իօնիայի պաշտօնի տիրոյ մնայ, մինակ առնոր տարեկան տոկոսը պիտի նուիրուի յիշեալ աղային տեղերուն :

Այս ալ կը ծանուցանէ որ Իգմիրու հայադղի երեւելիները այնպէս որոշեր են որ հանգուցելոյն պատմական մարմինը իրենց քաղաքը բերել տան . ուր տեղ մեծաշուք դամբարան մը կանգնեն ի նշան խորին երախտագրութեան նոյն քաղաքի ժողովուրդի : Վաթուքէն խորհուրդ . յիշեալ լրագիրը կը թըռուէ առաջինի Լեւեանին իր ժողովուրդը մէջ ձգած ազգամարական անուշ յիշատակները . այն է Սիւնեաց ընկերութեան ըրած առատ նպատար, ոսկի դար դրքին իւր արդեամբը տպագրութիւնը, և նոր կը տալը : Տեղւոյս ուսումնական ընկերութիւնն ալ յիշելով հանգուցելոյն այն առատ նպատար որ ճիշտի Վաթուքէն անուն գործքին հայ տպագրութեանը համար չի խնայեց, կ'աւելցունէ անոր բոլոր աղբիւր մէջ ձգած յաւերժական յիշատակներուն :



ԵՐԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՄԱՋԵ
ԳԵՐԱՊԱՏԻ ԳՐԻԳՈՐ ԱՂԱՅԻ ՍԵԼԵԱՆ

Գեղեցիկ արեւ Հայկազուն վեհի
Շիւղա, ո՛հ, նստիմ ի խոր խաւարի :
Հայկին ջնջ աստեղը լոյս տուք ինձ ոտից,
Գիտի զաւիտ ոսկերացն անբիծ .
Փարեցայց գնովաւ, Թացից արատաւօք,
Յերկրի օտարին ոչ թողից անհոգ .
Տարեալ կանգնեցից ընդ չքով Սասնաց
Ի քաղաք յիշատակ վեհին հայրենաց :
Չեղք արեւոտաց նոճեայ տարեւօք
Եւ ձեռք մանկուց դաբնեղար ծաղիօք
Պատուեցեն զտապան բարերար գիւցազնոյն
Եւ ճոխ օրհնութեամբ օրհնեցեն զանունն :

— Այնպէս կրակի Պէյօղուի Վարեկեան գալուցին աշակերտաց առաջին տարեկան քննութեան հանգիստը կատարվեցաւ ուրիշ Երրորդութեան ընդարձակ եկեղեցւոյն մէջ :

Այս քննութեանը քանի մը հարիւր հանդիսական կար, որոնց մէջ շատ երեւելի և ուսումնական անձինք ալ կային : Առաւմտականաց ամէն մէկ մէկ ուսման վրայով աշակերտաց լաւութիւնը վիճարկով արժանի տեսան պատուեց և մրցանակի . քնննութեան երկու աշակերտները յիշուեան աւելի էին, և ասոնց գլխաւոր ուսմանընթերցալ ասոնք էին, Հայերէն . Սրբազան պատմութիւն . Քրիստոնէական Վարդապետութիւն . Գաղղերէն . Սթաւեմաթիքա . Աշխարհագրութիւն . Երաժշտութիւն :

Թեպէտ վերը նշանակուած ամէն ուսմանց դաստառներուն աշխատութիւնը գովութեան արժանի է, բայց մասնաւոր գովութեան արժանի կը համարուի երաժշտութեան դաստառը Տէր Սեդուս արժանապարգ Քահանային աշխատութիւնը . որով հետեւ իւր քահանայական ծանր պաշտօնը միշտ անխնայ կատարելէն ետեւ ժամանակ կը գտնայ իւր դասն ալ անխափան տալով փոքրիկ միջոցի մէջ այսչափ քաջ վարժելու իւր աշակերտները :

Յիշուի մեծ ցաւ էր հանդիսականաց որ վեհափառ սրբազան Պատրիարք Հայրենիս ներկայ չի կրցաւ գտնուիլ քննութեանը, իւր ծանր զբաղմունքներուն պատճառաւ, բայց երբ տեսան որ իւր կողմէն յատկապէս իւր շնորհալի որդեգիր արժանապատիւ Վրժանէն վարդապետը խաւերէր էր ուսումնասէր Յովհաննէս վարդապետին հետ, ընդունելով անոնց փոխանորդութիւնը միջնորդութեան . մանաւանդ երբ որ յատուկ կոնգրակաւ ալ վեհափառ սուրբ Հոր օրհնութիւնը վայելցնին :

Ար յուսանք որ Պէյօղուի աղին բնակչաց սերը իրենց ընկերութեանը բարեկարգութեանը վրայ առաւել եւս ստատկանալով նոյն գաղտնի յառաջագիմութիւնը քիչ ժամանակի մէջ աղբիւս ուրիշ ամէն գաղտնիքէն գերազանց հանդիսանայ . որուն այս աստիճան հասնից իր պարտաւորութիւնը ըլլալէն ի դատ, բոլոր աղբիւս ալ խիտ ցանկալի պիտի ըլլայ անշուշտ զանազան լուստորեալ աղբիւս աղբիւս ըլլալուն : Վարդապետ մը բարեկարգութիւն ընկերութեան մը բարեկարգութեան յաւերժական կախալ ըլլալուն ամենեւին տարակոյտ չունինք . վասն զի միշտ կրտեսանք թէ քանի որ այգային գաղտնիքներն են մէկը այս միջոցներէս զուրկ է ի բարեկարգութիւնն ալ այնքան կասկածու է, այս բանիս սպառնալիքը աղբիւս տալու տարի առաջ ունեցած անխնամ գործողութեանը վեճակը հիմակուանին հետ բաղդաբերով կը գտնանք թէ ինչ երեւելի տարբերութեան մէջ է : Երբեք ասանկ առարկայներուն մէջ ընկերութիւն մը հատառվելուն նպատակը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ ամէն մէկուն խորհուրդը մէկ տեղ գալով արդարեւ ու օգտակարը ընտրել . ու աղբիւս բարեւոյն համար միմայն աշխատիլ . վասն զի կրնայ ըլլալ որ մէկ մարդու մը գատումը սխալ ըլլայ, մէկ հոգի մը խորհելը բանը եղած չըլլայ, կամ գուցէ լաւութեանց փոխադրող ալ է նէ՝ անբաւական ըլլայ այդ խորութիւնը ընել . որով զանցառութեամբ մը աղբիւս օգուտը չի կրնալով ճանչնալ, երջանկութեան կարծիքը թշուառութեան փոխէ :

Վասնիկ ընկերութիւն մը քանի որ բարեաւաճի, այնքան աւելի գաղտնի մը պատուը կը զարգանայ, ու տարուէ տարի տուած քննութիւններուն մէջ իր կատարեալ բարեկարգութեան նշանն ալ ցոյց կուտայ :

— Արշալոյս Արարտեան պատուական լրագիրը 304 թուով մէկ նամակ մը կը հրատարակէ Կոստանդնուպոլսէն իրեն գրուած յունվար 21 օրը, որով իր թղթակիցը կը ծանուցանէ որ քանի մը օր առաջ պէյօղուի թաղէ մը անցնելով բարեկարգ շէնքի մը հիմնարկութիւն տեսերէ . և որուն ըլլալուն վրայ տեղեկանալով մեծ ուրախութեամբ իմացեր է որ մեծաջան և աղբասէր համագիտաց ընկերութեան ժողովարանը և գաղտնի ըլլալու համար սահմանուած է եղեր : Այս լուրս այն նամակէն յիշեալ լրագրին միջոցով առնելով մենք ալ ուրախացանք . և այս առթիւս մեր այս լրագրոյս մէջ ալ կը հրատարակեմք, գիտելով թէ լաւ և կարգացողներուն մէջ ուրախացողներ շատ կ'ըլլան . որոնց կայ ալ նէ՝ մեզնէ չէ՝ այնքան աղբիւս յառաջագիմութեանը փոխադրողներն չէ :

Վասնիկ գրողը՝ եվթօք զարմանալու արժանի բան մը գտաւ է այս . թէ ինչպէս համար յիշեալ խորհրդարանին հիմնարկութիւնը, որ աղբիւսին յառաջագիմութեանը վերաբերեալ յատուկ լուր մըն է, բոլորովին անյիշատակ կը մնայ աղբիւս մէջ հրատարակուած լրագիրներուն մէջ . և մանաւանդ հաւաստանք մէջ . որ մայրաքաղաքիս հայերէն միմակ լրագիրն է : Բայց հայաստան լրագիրն ալ ասոր կը

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ